«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-023-26.02.2019-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ողջունելով ներկայացված օրենսդրական նախաձեռնությունը և ընդհանուր առմամբ կարևորելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի իրավակարգավորումները, առաջարկում է.

1. Նախագծով լրացվող Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[14]-րդ հոդվածի վերնագիրը համապատասխանեցնել առաջարկվող լրացման բովանդակությանը՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջները:

2. Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Լիցենզիա չունեցող անձանց կողմից «վարկ», «վարկավորում», «կրեդիտ», «կրեդիտավորում» բառերի կամ այդ գործունեությունը բնութագրելու համար կամ այդ գործունեության իրականացման նպատակով «փոխառություն», «փող», «դրամ», «փոխառության տրամադրում», «դրամի տրամադրում», «գումար», «գումարի տրամադրում», «փողի տրամադրում», «դրամի տրամադրում» բառերի կամ դրանց հոլովաձևերի և ածանցյալների օգտագործումը գովազդներում, հրապարակային օֆերտայում, ինչպես նաև լրատվության միջոցների, սոցիալական ցանցերի, էլեկտրոնային հաղորդակցման ցանկացած այլ միջոցների օգտագործմամբ ներկայացվող գովազդներում օգտագործումը, գովազդ իրականացնողներին կամ գովազդելուն աջակցելը՝», հաշվի առնելով, որ նախագծով նկարագրված մի շարք գործարքներ (օրինակ՝ փոխառություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության համաձայն կարող են կնքվել նաև քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակից այլ սուբյեկտների կողմից ևս, իսկ որոշ բառեր (օրինակ՝ փող, դրամ) կարող են գովազդվել նաև այլ նպատակներով:

Ուստի, առաջարկում ենք նեղացնել հոդվածի դիսպոզիցիան՝ սահմանափակելով վերը նշված բառերի օգտագործումը և դրանց կիրառման նպատակը: